

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

55^{րդ} ՏԱՐԻ, Է. ՇՐՋԱՆ

ԹԻ 2

4 ՄԱՐՏ 1906

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ակնարկ մը Հիւանդանոցին վրայ.	ԽՄԲԱԳՐԱԿԱՆ
Սեւեւս եկուր (Քերթուած).	ԵՂԻՇԷ ԵՊԻՍԿ. ԴՈՒՐԵԱՆ
Ալթրէքս քը Միւսէի արձանը.	ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ
Աբեղաձագն յ'Ամաս (Կցկտուր յիշատակներ).	ՎԱՀԱՆ ՎՐԴ. ՊԱՐՏԻԶԱԿՅԻ
«Մենասեր»ին Օրագիրը	ԹՂԹԱԿԻՅ ԲԵՐԱՅԻ
Սրսիս երգերը	ՀՐԱՆՏ ՆԱԶԱՐԵԱՆ

ՅՐԱՆՍՈՒՅԷՆ ԴԷՊՐ ՊՐԱԶԻԼԻԱ

(ՏՕԲԹ. ԼԵՈՒՈԼ ՔԱԲԼԱՆԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԸ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերթի տարեկան բաժանորդագրիցն է Կ. Պոլսոյ համար. Բառուցն դրո. եւ զաւանցեալն համար յիսուն դրո., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Գրանգ կամ 5 րուպի: Թղթատարական ծախքը Խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրատարակ կ'ելլէ ամեն շաբաթ առտու:

Ձի հրատարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասջելի պայմաններով:

Ձեռն-ԲԷ կը ծԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ
Հասցէ

درعليه ده غلطه ده (ماسيس) غرضه سى اداره سى

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Դալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople



Ծաղկաւոր թիւ

Թէլը, որ այսօր գրեթէ բոլոր ժողովրդաց գլխաւոր ըմպելիէն դարձած է, ա՛յնքան բազմաթիւ տեսակներ ունի որ, որդարեւ գործածողներուն համար բաւական դժուար է լաւ ընտրութիւն մը ընել: Այդ տեսակներէն մմանք նշանաւոր են իբր ախորժակով եւ քաղցրաբոյր, մմանք ալ թէեւ նոյնքան ախորժակի համ ու հոտ չունին, գերազանց են սակայն իբր կողմնակի եւ զօրացուցիչ: Վերջապէս իւրաքանչիւր թէյ իր սւրոյն յատկութիւններն ունի որոնք զինքը կը զանազանեն ուրիշ տեսակներէ:

Սահայն կայ թէյ մը, որ այդ յատկութեանց մմէնէն կարեւորները կը միացնէ իր վրայ, այսինքն՝ գոյն, համ հոտ եւ մանաւանդ կաշի դուրիշ եւ զօրացուցիչ անդուգական ազդեցութիւն մը, եւ այդ թէյն է ձաքանգի թէլը, որ այդ յատկութեանց շնորհիւ կը յարմարի մմէն տարիքի ու կազմութեան, մմէն կլիմայի եւ եղանակի եւ մմէն ճաշակի:

Սալբուխան եւ Խազուլիան թէյի մնծ վաճառատունը, իր բազմաթիւ յաճախորդաց ծառայութիւն մը մասնացանկու համար, այս անգամ մեծաքանակ ներածած է ձաքանական զուտ թէյ մասնաւոր եւ գեղեցիկ աւափերով ու կը հրուիրէ օգուտիլ այս առիթէն բոլոր անոնք, որ կը փափաքին ունենալ թէյ մը

Համով, հոտով, առողջապահիկ եւ կազդուրիչ:

Սոյն վաճառատան մէջ կան նաեւ կնդկական, չինական, Սէյլան եւ Ճավայի մմանաւոր տեսակ թէյեր:

Ուսադուրիւն մարգալի

2-10

ՏՈՔԹ. Բ. ԷՄԻՐՁԷ

Հանրածանօթ մանուկաբուժ եւ կնախաւոր (gynecologue), Տօքթօր Էմիրզէ որ 15 տարւան գործունէութեամբը մնծ համբաւ ստացած է, կը ծանուցանէ յոր. գոյ յաճախողներուն թէ ընկալաւոր փոխադրած է Պէքեար փողոց թիւ 18. Բաց ի վերայիշեալ իւր մասնագիտութենէ կը բուժէ նաեւ նորագոյն մէթոսներով ջղային եւ հագեկան ու երեւակայական մմէն տեսակ հիւանդութիւնները, ինչպէս նէվրոսթէնի եւ tic անուանուած աչքի երեւի եւ ուտերու ազեղ եւ ակամայ շարժումները եւ դաշտանի դադարումէ յառաջ եկած ջղային խռովումները եւ երիտաւորական մալիքները, ինչպէս նաեւ գինեմալիքը, մօրիֆնամալիքը եւ այլն, հիրակիներէն դառ մմէն օր կէսօրէն սկսեալ մինչեւ երեք ժամ հիւանդ կըն. դունի, եւ սւրբաթ օրերը ձրիաբար կը դարմանէ վկայեալ աղքատները: 2-10

ՆԱԶԱՐԷԹ ԽԱԶԷՐԵԱՆ

ՓԱՍՏԱՐԱՆ

Պոլիս, Մարբուճնըյար, Պարնարան խան թիւ 26

Ամէն կարգի դատեր կը ստանձնէ եւ խնդրոյ աւարկայ եղած գործերու համար թէ՛ բերանայի եւ թէ՛ թղթակցութեամբ բանակցութիւններ կը կատարէ եւ կարծիք կը յայտնէ. կը խմբագրէ եւ կը թարգմանէ դատերու եւ առեւտրական աւազանական պայմանագրութեանց վերաբերող թուղթեր: Ուրբաթ օրերը մինչեւ կէս օր ձրիաբար խորհրդակցութիւն կը կատարէ եւ կարծիք կը յայտնէ:

Ապահովագրական գործառնութիւններու եւ ի մասնաւորի կեանքի ապահովագրական ընկերութեանց նկատմամբ անհրաժեշտ եղող տեղեկութիւնները ձրիաբար կուտայ:

Կըլանձնարարէ օր մինչեւ որ այս մասին հարեալ եղած տեղեկութիւնները իրմէ չստացուին, ապահովագրութիւն չի ստորագրուի: Ապահովագրական փնտույց հասուցման դուրսերու եւ փոխադրէներու գանձում եւ կը ստանձնէ:

2-10

ԱՅՍ ԿԼԻՄԱՅԻ ՄԷՋ

Ընդհանուր վիշտեր կան որոնք այս աշխարհածանօթ ղեղով կատարելապէս կը բժշկուին:



SCOTT'S EMULSION

Հազ, հարբուխ, և բոլոր որկորի և թոքի վիշտեր ինչպէս թոքացաւ, և պրօնշիտ, շնչառութեան և կուրծքի երակներուն փորփոգումը և միւս տկարութիւնն պատճառող անհանգստութիւններ՝ անմիջապէս կը զսպուին, և կը տկարացուն և վերջապէս կը բժշկուին: Կամաւ նաւանդ ծիւրական ակտի նկատմամբ՝ առաջին նշանները տեսնուած ատեն, անմիջապէս առաջը կ'առնէ: Եթէ ընտանիքի մը մէջ այսպիսի աղետ մը կայ, պէտք ղեղարան մը ղիմել և:

ԸՍԳՕԹԻ ԲԵՂԱԳՐՈՒԹԻՈՒՆ

մը առնել: Ըսգօթի Բաղադրութիւնը այս աղետը կը դարկեցնէ և տան մէջ ուրախութիւնը կը վերականրէ:

Քիչերու վրայ ասոր ուշադրութիւն ընել պէտք է:

Բոլոր բեղութեան և բեղալուծանքը և ծախսէ:

PHOENIX ASSURANCE L Co.

“ՖԻՆԻՔՍ”



ՀԻՄՆԵԱՆ Ի ԼՈՆՏՈՆ 1782 ԻՆ
ՅԷ ՊՈՐՏԷ Ի ՊՈԼԻՍ 1869ԷՆ Ի ՎԵՐ
ՈՆԳԼ. ԱՊՈՆՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.
Իրամագլուխ և պահեստի դրամ
ԱճՊ. ոսկի 4,218,000

ՖԻՆԻՔՍ ոսկի հրդեհի դէմ Ապահովագրական Ընկերութիւն մըն է, ծանօթ իր պատուաւորութեամբ և շնորհալի մէջ իր անմիջական վճարումներով:

ՖԻՆԻՔՍ կ'ապահովագրէ հրդեհի և կայծակի դէմ թմբն ունեւորած և շարժուն սարքաւոր, յայտնաբերող պայմաններով:

Ընկերութեան նշանաբանն եղած է. ՈՒՂԱՄՏՈՒԹԻՒՆ և ԱՆՄԻՋԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ԿԼԱՍՈՒՑ. Յարգ վճարած է առաւել քան 27,000,000 անգլ. ֆլ.

Ընդհ. գործակալ Պ. Մ. և գաւառացի ՎԱՐԴԱՆԵԱՆ

Վերալիս խան, Պանք Օբոմանի մօտ Ղալաթիա:

Փոխ գործակալ Ե. Պ. ՈՒՐ. ԱՐԻԿԵԱՆ ՃԻՎԱՆ ԹԵՔԵՆԱՆ Էմիւր պէյ խան Ֆիսկիեան խան Զեմիլ ղիւզերու

2-10

Ա. ԷՆՔՈՒՐՃԵԱՆ

ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ՌԵՐԱ, ՄԵՐ ՊՈՂՈՑ ԹԻՒ 200

Կալաթա-Սէրայի Լիսէին դէմ
Գե. Սե. Նը. օրերը առաւօտեան կանուխին մինչեւ իրիկուան ժ. 11 1/2
Բե. Դե. Ուր. օրերը 6 կն մինչեւ 11 1/2
Կիրակի օրերը ժամայրութեամբ 2-10

ՄԱՍԻՆ

55^{րդ} ՏԱՐԻ, Է. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 2

4 ՄԱՐՏ 1906

ԱԿՆԱՐԿ ՄԸ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻՆ ՎՐԱՅ

(ԽՄԲԱԳՐԱԿԱՆ)

Սառն ժողովը, իր վերջին նիստին մէջ, հաստատեց Տօքթ. Վահրամ Թորգոմեան էֆ. ի ընտրութիւնը՝ իբրեւ անդամ Հիւանդանոցի Հոգաբարձութեան, Ուսումնական Խորհուրդի նախորդ ատենակցի կը յաջորդէ բարեխառակ Տօքթ. Խորասանճեան էֆ. ի, երկուքի լրացնելու համար բժշկական-դամներուն թիւը՝ Տօքթ. Նազարեան պէյի հետ։ Տօքթ. Թորգոմեան էֆ., իբրեւ բանասէր եւ ուսումնասէր բժշկ, յարմարագոյն ընտրելիներէն մէկն էր այս պատուակալ պաշտօնին որուն մէջ իրապէս օգտակար հանդիսանալու ամէն առաւելութիւն կ'ընծայէ։ Երբ միւս հոգաբարձուները կը զբաղին վարչական ու մատակարարական հոգերով—որոնք մեծագոյն բեռը կը կազմեն այդ բարեգործական Հաստատութեան գլուխը գտնուողներուն,—երկու բժշկ անդամներ շատ չեն՝ անոր բժշկական ու յարակից ճիւղերուն հսկողութիւնը կատարելու համար։

Հինուց ի վեր խնդիր էր թէ Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը անհրաժեշտ պէտք ունի՝ բժշկականներու, եւ վերջ ի վերջոյ բանիմացութիւնը ու գործնական գաղափարը յաղթանակը տարին՝ այլապէս մատածողներուն առարկութեանց վրայ։ Եւ բաւական տարիներէ ի վեր, ո՛չ միայն սկզբունքը ընդունուած, այլ կիրարկութեան մէջ իսկ է։ Պէտք է խոստովանիլ, սակայն, թէ այս դրութիւնը ա՛յն ատեն միայն կրնայ իր օգտակար արդիւնքները տալ լիովին, երբ

բժշկ-հոգաբարձուները պարբերական այցեւորութիւններով մօտէն տեղեկանան Հիւանդանոցի առողջապահիկ պայմաններուն, բժշկական դարմանմանց վիճակին եւ հիւանդապահական սպասարկութեանց որոնք, իրենց է՛ն կանոնաւոր ընթացքին մէջ անգամ, միշտ պէտք ունին տեսակ մը հսկողութեան կամ քննչութիւնի։

Երբ Հիւանդանոցի բժշկական ճիւղը զօրացնելու հոգածութիւն ցոյց կը տրուի մէկ կողմէ, ոչ նուազ գոհունակութեամբ կը դիտուին վարչական ճիւղին ընծայուած աշխատութիւնն ու խնամքը բովանդակ Հոգաբարձութեան կողմէ որուն ներշնչած վստահութիւնն ալ իր դերը ունեցաւ զբգիւտ տալու մեր հարուստներուն՝ որպէս զի լրացունեն Ս. Փրկչեան հաստատութեան պակաս մասերը։ Այսպէս, վերջացող տարուան մէջ միահաղոյն ձեռնարկուեցաւ երեք թեւերուն շինութեան զոր ստանձնած են, առանձինն, Տեարք Յ. եւ Մ. Յակոբեան, Կիւլպէնկեան եղբարք եւ Մաթուս էֆ. Ունճեան։

Կը մնար մատուռը,—է՛ն նուիրական մասը Հիւանդանոցին,—հո՛ն ուր պատասպարեալները կ'աղօթեն առտու իրիկուն, հոգեկան սփոփանք մը գտնելու համար իրենց ցաւերուն, ուր տօնական կրօնային հանդէսները կը կատարուին՝ անհաղորդ չթողլու համար կեանքի այդ շրջակայները Եկեղեցւոյ փառաբանութենէն. եւ անոր հիմնարկէքն ալ կատարուեցաւ վերջերս, շինութեան ծախքը

ստանձնուած ըլլալով Թահթապրուն Եղբարց կողմէ :

Աչքի առջեւ բերելով բանակցութեանց այն արագ եղանակը, — վասն զի բարերարութիւն մըն ալ առանց բանակցութեան չէ որ կը կատարուի, — եւ համեմատաբար կարճ միջոցը ուր որոշուեցաւ այս շինութեանց ստանձնումը՝ նուիրատուներուն կողմէ, սխալ չպիտի ըլլայ հետեւցնել թէ աւելի՛ փոյթեռանդութիւն նշարուեցաւ գործին մէջ քան այն թուականին ուր կը ձեռնարկուէր Հիւանդանոցի արդի շէնքերուն կառուցման՝ հին փայտաշէն ու խարխուլ շէնքին տեղ, կարեւոր հանգանակութեամբ մը ունեւոր դասակարգին մէջ :

Կրնա՞նք հետեւցնել այս բաղդատութեանէն թէ բարերարութեան ոգին ու բարեպաշտական զգացումը ժամանակին հետ, աւելի՛ ծաւալած ու դիւրահաղորդ դարձած են : Այս տեսակ զննութիւն մը պիտի շեղեցնէր մեզ մեր նիւթէն, մինչդեռ իրողութիւնը սա՛ է, իր ճշգրիտ ու անկողմնակալ դատողութեանը մէջ, թէ Պէզճեան Յարութիւն Ամիրայէն սկսելով մինչեւ այսօր, ամէն անոնք որ օժանդակած են ու կ'օժանդակեն Հիւանդանոցին, շինութիւններով, նորոգութիւններով, տեւական հանգամանք

ունեցող նուիրատուութիւններով, ամէնքն ալ ներշնչուած են մարդասիրական նոյն անկեղծ ու բարեգութ իտէալէն, — օգնել հիւանդներուն ու չքաւորներուն, մահիճ մը ընծայել անոնց վատառողջ ու յոգնած մարմինն, դեղ և դարման՝ անոնց ապաքինմանը համար, և պատսպարան մը ընտանեզուիկ փոքրիկներուն որոնք բարոյական խնամքի ու դաստիարակութեան կը կարօտին :

Եւտի Գուլէի մեր Հիւանդանոցը, Գաղլը Չէլմէի Որբանոցով միասին, այս գերազանցապէս մարդասիրական իտէալին ձեռնած է ամէն ժամանակ, տարիներու ընթացքին հետ լաւագոյն կազմակերպութիւն մը ստանալով աստիճանաբար, ընդարձակուելով, բարւոքուելով, իր ներքին թերութիւնները ուղղելով :

Բարերարութեան ոգին է որ կ'առաջնորդէ անոր վարիչները, խնամակալները, սատարողները, իրենց զօրավիգ ունենալով վեհ. ԿԱՅՍԵՐ Բարձր Հովանին որ կը տաւորածուի նաեւ մարդասիրական այդ Հաստատութեան վրայ՝ բաղմադան շնորհներով :

ԵՏԵՐԷՍ ԵԿՈՐԲ

«Ասէ ցնա (ցՊետրոս) եկ զկնի իմն :
(Յովհ. ԻԱ. 19)

Իթէ զիս տանիս դէպի Յորդանան՝
Բացուած երկինքին հրաշքներուն ներքեւ,
Կուգա՛մ վայելել Բու սիրոյդ պարգեւ
Վայրերն այն դալար, ջուրերն հանդըստեան :

Կուգա՛մ ետեւէդ, եթէ տանիս զիս
Կանայի զըւարթ ակումբներուն մօտ,
Ուր թակոյկներուդ գինին ծաղկահոտ
Պիտի արբեցնէ օրերը կեանքիս :

Կամ՝ եթէ տանիս զիս հո՛ն ուր յողջնած
Ու վաստակարեկ նըստար մօտ հորին,
Ես Դու կենդանի ջուրէդ՝ առօրին
Կուգամ բուժելու ծարաւս անձկայրեաց :

Կուգամ թէ տանիս զիս Դեննեսաբէթ ,
Ծովակին չըքնաղ ափերուն վըրայ,
Ուր անուշ հովի՛ն հետ կը թըրթըռայ
Արձագանգ մը միշտ՝ անջինջ բառերէդ :

Պատրաստ եմ գալու , եթէ տանիս զիս
Դէպի այն լեռան կատարն անմարդի՝
Ուր չողերն հագար արեւ ու վարդի,
Ու բոցով կ'վառեմ ամպերն երազիս :

Կուգամ ոստերով ձիթենիներու
Հո՛ն ուր յաղթութեամբ կ'ողջունուիս համակ,
Ու տարածելով ձորձերս ոտքիդ տակ
Կը վազեմ փառքիդ չուքն ընդգըրկելու :

Կուգամ ետեւէդ մինչեւ Վերնատուն՝
Վերջին Լ'նթրիքէդ բաժինս առնելու ,
Ու նըւագելով երգ կամ ալէլու՝
Կեդրոնի Ջորէ՛ն ալ կ'անցնիմ ժըպտուն... :

Բայց կը վարանի՛մ գալ Դեթսեմանի՝
Ուր քունով մ'աչքերս պիտի ծանրանան ,
Դուցէ ան՛յն ըլլայ իմ քունը մահուան՝
Ու մեծ Ոչինչին գիրկը զիս տանի... :

Մի՛ մի՛ զիս կանչեր աւելի հեռու ,
Ուր անիրաւներն կը ձաղկեն ըգ՛րեզ ,
Որ խարոյկի քով՝ խանձողի մը պէս
Կըծկած չը մըխամ՝ մոխիր դառնալու :

Ա՛հ, միթէ կըրնամ գալ Դու ետեւէդ
Երբ խաչը ուսիդ՝ կ'ելլես Դողգոթա...
Բայց ի՛նչ սերտ հրապոյր, ի՛նչ բուռն ոյժ է դա
Որ զիս դէպի հո՛ն ալ կ'տանի Բեզ հետ :

ՄԻՒՍԷԻ ԱՐՁԱՆԸ

(ՍՈՒՍԱՅԻՆ ՅՕԴՈՒՍԻՆ)

Օր մը, — չկարծէք թէ հէքեաթ մը կը սկսիմ, բարիգեան քրօնիկագիր մըն է պատմողը, — Ֆրանսայի ամէնէն նշանաւոր արձանագործներէն երկուքը՝ Ֆալէիէն եւ Անթօնէն Մէրսիէ, ճաշի հրաւեր մը կ'ընդունին ծանօթ գրամատէրի մը՝ Պ. Օզիրիսի կողմէ։ Հրաւիրագիրը ժամագրովայր կը նշանակէր բացօթեայ ճաշարան մը՝ ուր որոշեալ ժամուն իրար կը գտնեն վերոյիշեալ երեք անձերը։

— Նախ ճաշենք, կ'ըսէ Պ. Օզիրիսի՝ իր հրաւիրեալներուն զարմանքը տեսնելով, վերջէն կը պատմեմ այս հրաւերին շարժառիթը։

Կը նստին, կ'ուտեն, կը խմեն, եւ երբ կարգը շամբանեային կուգայ, Պ. Օզիրիսի խօսք կ'առնէ ու կ'ըսէ երկու արուեստագէտներուն։

— Արձաններու այս առատութեան մէջ չէ՞ք կարծեր որ անիրաւութիւն մը ըրած կ'ըլլանք մարմարեայ յիշատակարանէ մը զրկելով մեր ամէնէն զմայլելի բանաստեղծներէն մէկը, Միւսէն. ես շատ կը սիրեմ զինքը, գրեթէ միշտ հիացմամբ կը կարդամ իր գործերը, ու կը փափաքիմ որ ան ալ իր արձանը ունենայ Բարիզի հրապարակներէն մէկուն վրայ... Բարիզ ընդարձակ է, եւ որչափ ալ՝ նոյն իսկ Միւսէն շատ աւելի անարժան անձերու արձաններով լեցուած ըլլան իր հրապարակները, հարկաւ կրնանք պարագայ եւ յարմար անկիւն մը գտնել Միւսէի յիշատակը անմահացնելու համար... Ի՞նչ կ'ըսէք...

Երկու արձանագործներն ալ համամտութիւն կը յայտնեն։

— Դրամը իզմէ, կը յարէ Պ. Օզիրիսի, եւ արձանն ալ ձեզմէ... կրնաք վստահ ըլլալ թէ ի՞նչ որ ալ ըլլայ ձեր առաջարկելիք գիշեր, պիտի վճարեմ առանց առարկութեան... կը բաւէ որ իմ սիրական բանաստեղծս ալ իր արձանը ունենայ։

Կերակուրէն վերջ, երեքը մէկ կ'ելլեն ճաշարանէն, եւ կը սկսին հետիոտն չըջիլ

Բարիզի մէջ՝ Միւսէի արձանին յարմար վայր մը գտնելու համար։ Այդ կերպով՝ գրեթէ ամբողջ Բարիզի շրջանը կ'ընեն, եւ վերջ ի վերջոյ կ'ընտրեն Գոմէտի Ֆրանսէզ թատրոնին հրապարակը՝ որ ամէն յարմարութիւն կը ներկայացնէր իրենց գաղափարին գործադրութեան համար։

* * *

Արձանը կանգնուած է այսօր, եւ բացումն ալ կատարուեցաւ անցեալներս, բայց մինչեւ անոր կառուցումը՝ որքան իրադարձութիւններ ու պատահարներ, որոնք այսօր պատմութիւն մը չնորհած են իրեն, ինչպէս ունի արդէն իր ներկայացուցած ցաւահար եւ յուսարեկ բանաստեղծը։

Պ. Օզիրիսի առաջարկին վրայ՝ մօտաւորապէս տարի մը կ'անցնի, եւ տակաւին արձանին քարն իսկ չէ ընտրուած։ Երկու արձանագործները աշխատութեան բաժանում մը միայն ըրած են, Անթօնէն Մէրսիէ՝ բանաստեղծը պիտի պատրաստէ եւ Ֆալէիէն ալ՝ բանաստեղծութեան մօտան, բայց արդէն իսկ ուրիշ ստիպողական գործեր ունին իրենց ձեռքը, եւ չեն կրնար Միւսէի նուիրուիլ։

Վերջապէս՝ Ֆալէիէն կը քաշուի, եւ Անթօնէն Մէրսիէ կը ձեռնարկէ աշխատութեան։

Եւ ահա այդ առթիւ կը ծագին բուն դժուարութիւնները։ Շուայտ ու մշտապէս վշտերով յղի կեանք մը անցընելէ վերջ, Միւսէ մեռած է 1857ին, տակաւին երիտասարդ՝ թէեւ ծիւրած ու կեանքի բոլոր յոյսերէն եւ ակնկալութիւններէն պարպուած։ Իր ժամանակակիցներէն ոչ ոք մնացած է որ կարենայ քիչ շատ յուսատու գաղափար մը ներշնչել արուեստագէտին։ Միայն լուսանկարներ կան՝ որոնք սակայն շատ անբաւական վաւերագիրներ են՝ արձանի մը պատրաստութեան իբր հիմ ծառայելու համար։

Անթօնէն Մէրսիէ կը շփոթի սկիզբները, բայց օր մը յանկարծ միտքը կ'իյնայ Տիկին Մարթէլլէն, որ ամբողջ տասը տարի գուրգուրացող և խնամոտ մօր մը պէս հսկած է բա-

նաստեղծին վրայ, եւ մարդկօրէն կարելի ամէն անձնութիւն ցոյց տուած է անոր ցաւերն ու տառապանքը մեղմելու համար:

Միակ անձն էր որ պիտի կրնար զինքը լուսաբանել, եւ պէտք եղած տեղեկութիւնները տալ Միւսէի սովորութեանց, հակումներուն եւ գլխաւորաբար հագուստին ու նիստ ու կացին նկատմամբ: Անթօնէն Մէրսիէ կ'երթայ կը գտնէ այդ կինը, Տիւրաս փողոցի մէկ հին տան մէջ, իննսուն տարեկան պառաւ մը՝ որ գրկաբաց կ'ընդունի իր սիրասուն Միւսէին յիշատակը յաւերժացնելու պատրաստուող արուեստագէտը:

Տիւրաս Մարթէլէ՝ երիտասարդ աղջիկ մըն էր եւ Ատէլ Քօլէն կը կոչուէր, երբ Միւսէի մայրը զինքը իր քով կ'առնէ իբր կարուհի: Քանի մը ամիս կ'աշխատի այդ հանգամանքով, բայց անսպասելի պատահար մը պատճառ կը դառնայ որ թողու ասեղը եւ իբր հիւանդապահ հաստատուի բանաստեղծին սնարին մօտ:

Իրիկուն մը՝ Միւսէն տուն կը բերեն զարհուրելի վիճակի մը մէջ: Զղային տագնապէ մը զգեստնուած էր եւ կը դողար ամբողջ մարմնովը: Անմիջապէս կը պառկեցընեն զինքը ու կը սկսին խնամել, ինչ որ ալ աւելի կը սաստկացնէ տագնապը: Բժիշկը բաւական քանակութեամբ փփրոն կուտայ, բայց օգուտ մը չի ծնիր: Միւսէ կը գունատի, եւ վառ աչուրները մեծ մեծ բացած կը սկսի զառանցել: Ինքզինքը դատարանի մը մէջ կը կարծէ, անկողինն դէմը դրսւած երկու բարձերը դատաւորներ կ'ենթադրէ, և իր անունն ու տարիքը կը յայտնէ բարձրաձայն իբր թէ կանոնաւոր հարցաքննութեան մը ենթարկուած ըլլար:

Տեսնելով որ բժշկական խնամքներէ օգուտ մը չի ծնիր, Ատէլ Քօլէն տարրեր միջոց մը ձեռք կ'առնէ: Իր լուստոն, ժըպտուն եւ յուսալից խառնուածքը կը ներարկէ բանաստեղծին, կը խնդացնէ զայն, կեանքը աւելի լուսաւէտ եւ աւելի անուշ ցոյց կուտայ անոր. ու գոնէ առժամաբար կը յաջողի զայն փրկել:

Այդ օրուրնէ սկսեալ, կարուհին կը դառնայ հիւանդապահ մը, անձնուէր ու գործովագին, եւ բանաստեղծը այլ ևս բնաւ չի զրկուիր անոր խնամքէն: Եւ Ատէլ Քօլէնի համար դիւրին գործ մը չըլլար ատիկա, որովհետեւ դժուար բան էր Միւսէն դարձանելը: Տարօրինակ սարսափներ, արտակարգ անհանգստութիւններ կ'ունենար, չարունակ զառանցանքի մէջ էր ու սոսկալի մղձաւանջներ կը խռովէին զինքը անընդհատ:

Յիշատակներու հատոր մը գոր Տիւրաս Մարթէլէ հրատարակեց այս օրերս, շատ և տաքքրական մանրամասնութիւններ կը պարունակէ այդ մասին:

Անգամ մը, Միւսէ կը կանչէ զինքը ու կ'ըսէ.

— Մահճակալիս անկողինը հանէ եւ քու անկողինդ տուր ինծի. իմ անկողին չէ, աւագակապետ մըն է, եւ ինծի անանկ կու գայ թէ ես ալ իր մեղսակիցն եմ, հետեւաբար՝ պէտք է զինքը ազատեմ:

Յետոյ՝ յիշողութիւնը չարչարելով՝ կը կը յարէ.

— Օհ, պէտք եղածին չափ ոյժ կայ վերաս, եւ կը հասկնամ թէ զառանցանքի մէջ եմ, բայց հիմայ միայն: Երբոր քնանալ կը փորձեմ, այդ աւագակապետը հանգիստ չի թողուր զիս, կ'արթնցնէ ու կ'ըսէ. «Զպիտի քնանաս, պէտք է որ ինծի հետեւիս:

Անկողինները կը փոխուին, եւ Միւսէ շատ լաւ գիշեր մը կ'անցընէ:

Ուրիշ անգամ մը, կէս գիշերէն երկու ժամ վերջ, Ատէլ Քօլէն ընդոստ կ'արթննայ զանգակի հարուածէ մը: Միւսէն է որ զինքը կը կանչէ: Խնդճ աղջիկը կ'աճապարէ բանաստեղծին սենեակը, եւ անճանաչելի վիճակի մը մէջ կը գտնէ զայն: Միւսէ՝ կատարեալ սարսափի մը մասնուած՝ մատուր անկողինն մէկ ծայրը ցոյց կուտայ ու կ'ըսէ.

— Սա տեղ կեցիր... դադաղաբարձ մը կայ այդտեղ... մ'երեբար, որովհետեւ ինծի կը սպասէ, զիս տանելու եկած է... սեւ

պատահումը ունի թեւին վրայ... դուռն երթալուդ պէս երեւան պիտի ելլէ...

Նոյն օրը մեռած էր դրացի կին մը՝ որուն հիւանդ ըլլալը Միւսէ գիտէր։ Ապահովաբար այդ կինը եղած էր մղձաւանջին պատճառը, որովհետեւ Միւսէ չէր սիրեր մեռելները։

Ատէլ Բօլէն՝ անմիջապէս կը վառէ բոլոր լոյսերը, յետոյ պատուհանները կը բանայ, եւ վերջ ի վերջոյ կը յաջողի զայն հանդարտեցնել։ Հազիւ ինքզինքը գտած՝ Միւսէ կը հարցնէ.

— Ինչպէս է մեր դրացին, լուր մը ունիս։

Ատէլ, կը ստիպուի ստել.

— Տասնըհինգ օր կայ որ գիւղ գացած է, հոս չի գտնուիր։

— Ես անանկ կարծեցի թէ մեռաւ պահ մը առաջ, կ'ըսէ բանաստեղծը։

Միւսէ՝ վայրկեանը վայրկեանին դգացած էր դրացի կնոջ մահը։ Բայց բարեբաղդաբար Ատէլ խաբած էր զինքը։ Այլապէս՝ կրնար շատ աւելի զարհուրելի տագնապի մը մատնուիլ։

Ատէլ՝ ամբողջ գիշերը չի բաժնուիր սենեակէն՝ որպէս զի կարենայ հանգիստ քննանալ։ Եւ ոչ իսկ աչուրները կը գոցէ։

* * *

Բանի՝ օրերը կ'անցնին, Միւսէի առողջութիւնը հետզհետէ կը վատթարանայ։ Արդէն հանգիստ ալ չի մնար։ Հազիւ դուրս ելած՝ անա կ'ինքն «կ'առաւանգեն» զինքը։ Ատէլ Բօլէնի համար՝ ցաւագին յիշատակներ են ատոնք։ Ինք կը խնամէ, ինք իր առողջութիւնն ու խաղաղութիւնը կը զոհէ, կը չարչարուի ու կը տանջուի եւ իր աննկուն ու յոգնիլ չգիտցող անձնութիւններու շնորհիւ կը յաջողի քիչ շատ «կեանքի բերել» զայն, բայց անա իսկոյն կը խլեն ձեռքէն, կը մըխըրճին շուայտութեան մէջ, եւ կրկին իրեն կը վերադարձնեն ա'լ աւելի սոսկալի վիճակի մը մէջ։

Եւ խեղճ աղջիկը կը վերսկսի խնամել զայն, միշտ միեւնոյն անձնութիւնութեամբ, առանց երբեք յոգնելու, առանց մանաւանդ արտունջ մը յայտնելու։

Կարծես ոչ իսկ իր ըրած զոհողութեան մեծութիւնը կ'ըմբռնէ։ — «Շատ բան պէտք չէր զինքը հանդարտեցնելու համար, կ'ըսէ իր յիշատակներուն մէջ, ինչպէս որ պզտիկ բանէ մը կ'առնուէր, այնպէս ալ՝ պզտիկ բանով մը կը մխիթարուէր. երբեմն երբեմն անհամբեր ու սրանեղ կը դառնար. քիչ մը անուշ լեզու, եւ անա իսկոյն կը խաղաղէր»։

Իր համեստութիւնն ալ մեծ է իր անձնութեան պէս։

Միւսէ՝ երթալով աւելի ջղաքրգիւ կը կը դառնար, բայց քանի՜ շուրջը ամէն բան սեւ կը տեսնէր, ա'յնքան Ատէլ կ'աւելցնէր իր գուրգուրանքը։

Օր մը, Միւսէ յանկարծ տուն կը վերադառնայ, եւ Ատէլը կանչելով կ'ըսէ անոր.

— Այս գիշեր հոս չպիտի պառկիմ։

— Ինչո՞ւ։

— Մեր վրան կ'ին մը կը բնակի... քիչ մը առաջ՝ դաշնակ մը կը փոխադրէին անոր սենեակը... կ'երեւայ թէ պզտիկներ ունի որոնք դաշնակի դաս պիտի առնեն եւ անախորժ դափդափ մը պիտի յարուցանեն... եթէ աղուոր եղանակ մը ըլլայ՝ կը սիրեմ... բայց դափդափը, մանաւանդ տղոց կողմէ, անտանելի է։

Ատէլ՝ անմիջապէս դռնապանին կը դիմէ տեղեկութիւն առնելու համար։

— Երկու կ'ինքն են, կ'ըսէ դռնապանը, մայր մը եւ աղջիկ մը՝ որոնք վերի սենեակը վարձեցին... իրաւ է որ դաշնակ մը ունին, բայց աղջիկը հիւժախտաւոր է... չեմ կարծեր որ դաշնակ զարնելու առիթ ունենայ։

Ատէլ կուգայ Միւսէի կը յայտնէ թէ պզտիկներ չկան վերի սենեակը, թէ շատ դաշնակ ալ չպիտի զարնեն։ Միայն՝ աղջկան հիւանդութիւնը գաղտնի կը պահէ, աւելորդ յուզում մը չպատճառելու համար։

Իրապէս ալ, կ'անցնի քանի մը չաբաթ եւ դաշնակին ձայնն անգամ չելլեր։ Միւսէ կը մոռնայ այդ կ'ինքն ու դաշնակը, երբ իրիկուն մը՝ դուրս ելլելու միջոցին, յանկարծ դաշնակին ձայնը կը բարձրանայ վերի սենեակէն, եւ բաղդը այնպէս կը բերէ որ բայ

նաստեղծին սիրական կտորներէն մէկը կ'ըլլայ նուագուածը:

Միւսէ գլխարկն ու գաւազանը սեղանի մը վրայ կը դնէ, կը նստի, և Ատէլի նշան կ'ընէ որ լուռ մնայ:

— Հրաշալի կը նուագէ կոր, կ'ըսէ պահ մը վերջ՝ երբ դաշնակին ձայնը կը դադարի. եթէ այս կինը ամէն օր նուագէ, ա'լ բնաւ դուրս չեմ ելլեր:

Հակառակ իր փափաքին, դաշնակին ձայնը քիչ անգամ միայն լսելի կ'ըլլայ: Եւ միշտ՝ Միւսէ հաճոյքով մտիկ կ'ընէ:

Վերջին հիւանդութեան միջոցին՝ Միւսէ խուլցած էր: Առտու մը, մինչդեռ եղբայրը եւ Ատէլ իր քով կը գտնուէին:

— Մտիկ ըրէք, մտիկ ըրէք, տեսէք ինչ անուշ կտոր մը կը զարնէ, կ'ըսէ յանկարծ:

Բայց ոչ իր եղբայրը, ոչ ալ Ատէլ՝ բան մը չեն լսեր:

— Օհ, այդ կինը, բայց հրաշալի դաշնակ կը զարնէ կոր, կը յարէ Միւսէ. երբեք ասանկ աղուոր բան չէք լսած... ասիկա պարզապէս երկնային բան մըն է:

Վերի սենեակին աղջիկը սակայն, վեց ամիս առաջ մեռած էր, և մայրն ալ քիչ վերջը հեռացած էր տունէն:

* *

1857 տարուան մայիս մէկին երկար ու ցաւագին թալուկ մը կրկին անկողին կը նետէ Միւսէն: Տագնապը կ'անցնի վերջապէս, ու բանաստեղծը հանդարտ քունի մը մէջ կը թաղուի, որուն վրայ՝ եղբայրը կը մեկնի՝ ըսելով.

— Կը յուսամ որ այս գիշեր շատ լաւ պիտի անցընէ:

Միւսէի սնարին քով կը մնան Ատէլ և քոյրը՝ տիկին Շառտո, որ իրեն օգնութեան փութացած էր: Բաւական քնանալէ վերջ, Միւսէ կ'արթննայ, և կեանքին մէջ առաջին անգամ ըլլալով Ատէլի ձեռքը կը բռնէ ու կը սեղմէ: Յետոյ, անոր միւս ձեռքն ալ կը բռնէ, և իր տկար բաղունքներուն վրայ մնացած ամբողջ ոյժով կ'աշխատի զայն իրեն մօտեցնել:

— Հետդ խօսիլ կ'ուզէ կոր, կ'ըսէ քոյրը:

— Բայց Ատէլ չ'առ աւելի լաւ կը ճանչնար Միւսէն:

— Ո՛հ, կ'ըսէ, ինծի հետ խօսիլ չուզեր, այլ իրեն սիրելի էակի մը վրայ կը մտածէ, հանդարտ թողունք զինքը:

Երկուքին ալ շատ յուսատու կը թուէր հիւանդին վիճակը:

Միջոց մը՝ Ատէլ թիկնաթոռի մը վրայ կը նետուի: Բնանքութեան օր կար որ չէնք չնորհք չէր քնացած. և ահա իսկոյն քունը կը տանի այդտեղ: Բայց քիչ վերջը, քոյրը զինքը կ'արթնցնէ և ցոյց կուտայ բանաստեղծը որուն չնչառութիւնը ընդհատուած էր: Ատէլ անմիջապէս ոտքի կ'ելլէ, և ամէն խնամք կը տանի: Բայց ոչ եթէրը օգուտ մը կ'ընէ, ոչ ալ ամենեաքը, և Միւսէ հոգին կ'աւանդէ խելայեղ աղջկան բաղունքներուն մէջ, կէս գիշերէն երեք ժամ ետքը: «Մեռնելէն վերջ, կ'աւելցնէ Ատէլ Բօլէն իր յիշատակներուն մէջ, Միւսէի դէմքը հանդարտութեամբ կը ճառագայթէր: Սն մեզ թողուց, մեղմէ խուսափեցաւ ճիշդ այն վայրկեանին՝ ուր ուրիշ ամէն ատենէ լաւ կը կարծէինք զինքը:»

Բայց մենք մոռցանք Միւսէի արձանը որուն պատմութիւնը պիտի ընէինք:

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ

«Մենասէր»ին Օրագիրը, զոր կը հրատարակենք այս թիւով, իր վերջին մասին մէջ անցողակի յիշատակութիւն մը ըրած է Տօքթ. Ս. Թէրզեանի կողմէ Պ. Հրանտ Մամուրեանի դէմ բացուած ծանօթ դատին, որուն արդիւնքը իմացուած չէր տակաւին՝ այդ տողերը գրուած պահուն: Վերջին վայրկեանին կը կարդանք Արեւելիի մէջ, թէ Իզմիրի պատմական ատեանը «աճաբար» բառին իմաստը ստուգելու կոչուած մասնախումբին եղբակացութիւնը լսելէ ետքը, այն որոյման յանգելով թէ «հօգապաղ» կը նշանակէ, մէկ օտմ. ոսկի տուգանքի դատապարտեր է Պ. Հրանտ Մամուրեանը՝ այդ բառը գործածած ըլլալուն համար իր մէկ յօդուածին մէջ, ինչեւ ըսելիին նկատմամբ:



ԱՐԵՎԱԶԱԳՆ ՅԱՐՄԱՇ

ԿՅԿՏՈՒՐ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

Սուրբ — Գրքին մէջ գրուած է թէ «Աստուած զղջացաւ մարդը ստեղծած ըլլալուն համար»։ Արսէն վարդապետ ամէն անգամ որ կը տեսնէր Աղջիկ—Մինասը և կը մտաբերէր Աստուծոյ գրքին այս խօսքը, ապուշ ապուշ անոր երեսին նայելով կ'ըսէր. «Եթէ Աստուած մարդը ստեղծած չըլլար, և Աղջիկ—Մինասը միայն ստեղծած ըլլար, պիտի չղջջար»։

— Ծօ, խելիանոս, կ'ըսէր անոր Աղջիկ—Մինաս, ուրեմն ես Աստուծոյ ստեղծուած չեմ։

— Եթէ Աստուծոյ ստեղծուած ըլլայիր, աշխարհի համը առած կ'ըլլայիր։

«Ի՞նչէն գիտես թէ ես աշխարհի համը առած չեմ»։

— Վասն զի ոչ մանչ ես, և ոչ աղջիկ։

Այս բանակալի կար Վանքին մէջ ընդ մէջ այս երկուքին, որոց մին՝ Մինաս՝ միշտ կը մտմտար թէ ի՞նչու Աստուծոյ մարդ ստեղծուած չէ, և միւսը՝ Արսէն կը մտմտար թէ ի՞նչու Մինասիկն Աստուծոյ մանչ—աղջիկ ստեղծուեր է։

Օրմանեան Սրբազան, որ այն ատեն վանահայր էր, փորձեց իր բովանդակ տաղանդովն ու հանճարովն այս երկուքին այս մտմտութիւնը փարատել, այլ չյաջողեցաւ։ Եւ այս եղաւ իր վանահայրական բովանդակ պաշտօնավարութեան մէջ իր ալ միակ մըտմտութիւնն ու հանճարը։

Ահա այս արտառոց անձերէն մին՝ Մինասիկն էր որ, գիշերուան մութին, կէս գիշերին գրեթէ, Վահան վարդապետի սենեկին դռնակը կամացուկ կամացուկ կը դարնէր։

Թը՛ք, թը՛ք։

Ներսէն՝ ո՛վ է ան։

Թը՛ք, թը՛ք։

Ներսէն՝ բարձրաձայն, ո՛վ է ան,

— Մեղայ՛, ծառայ եմ Աստուծոյ։

«Ուստի՞ դաս, ի կալո՞յ դաս թէ ի հընձանէ»։

— Ոչ ի կալոյ դամ և ոչ ի հնձանէ, այլ Տէր առաքեաց զիս։

«Ի բա՛ց կաց յինէն, զի այր մեղաւոր եմ ես»։

— Ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս յապախարութիւն։

«Բանդ գնա՛ պէ, զի՞նչ անուն է քո»։

— Կորստագիւտ սուրբ — Մինաս։

«Ուրեմն այն Մինասն էք, որ Հապելիս տանի մէջ կռապաշտներէն եփուած հացերէն իբր պիղծ հաց չուտելով՝ խալած ցորեն կամ աղած ալիւր կերաւ 140,000 տարի»։

— Ես ան չեմ, ան հոռոմ էր։

«Ո՛վ ես ուրեմն»։

— Ես ան եմ, «որում ընդ առաջ ել Աբրահամ, և մատոյց նմա հաց և գինի պատարագ»։

Վահան վարդապետ, գինիի ձայնը լսելուն պէս, իսկոյն սենեակին դռնակը բանալով — արքայութեան դռներն ալ ըլլային, պիտի բացուէին ի լուր այդ գինի բառին—, գոչեց. «Մուտ յուրախութիւն Տեառն քո»։

Ո՛վ էր այս մարդն, ո՛րկէ ուր եկած ընկած էր հոս։

Ըստ կենսագրութեան Արսէն վարդապետի, այս Մինասիկն Ատաբազարի մօտ մուշմուլայի ծառի մը տակ ծնած էր. տղաբերքէն յետոյ՝ մայրն երբ նուազած էր, ամուլ կին մը տղեկը գողցած ու պահած էր բունկալի մը մէջ։ Անոր ծնողքն ի գիւտ կորսուած իրենց տղեկին, Պահլաճուխի Սոխ միարի լեռը, ուր կորստագիւտ Սուրբ Մինասի մատուռը կար, հոն ուխտեցին և երազի մէջ իմացան թէ տղեկն ո՛ւր է. եկան գտան զանի բունկալին մէջ, այլ սակայն երեսները կտրուած հաւերէն, որոնց կտուցի նշանները տակաւին կան կը մնան Մինասի երեսին վրայ իբր պիսակներ։ Ծնողք անուանեցին նորածինը յանուն կորստագիւտ սուրբ Մինասի՝ Մինաս, այլ ... քիչ ատենէն այս անհուն ուրախութեան յաջորդեց խոր տրտմութիւն մը, վասն զի որքան որ երախան մանչ էր, այլ ձայնը աղջկան էր։ Կասկածն ու մամլւորութիւնն առաւ զիրենք, ի՞նչ ընէին. — վհուկ, ներու շիմեցին։ Որոց վերջին խօսքն եղաւ։

տանիլ երախան Արմաշու վանքը, Չարխա-
փան Սուրբ Աստուածածնի մատուցանել եւ
երախային պատահած չարին խափանիլը խնդ-
րել Չարխափանէն :

Այն ատեն Արմաշի եւ Երուսաղէմի վա-
նականութեանց մէջ խնդիր մը ծագած էր :
Արդէն դարաւոր տարիներէ ի վեր խնդիր
եղած էր բոլոր բովանդակ քրիստոնեայ աշ-
խարհի մէջ թէ, հրեշտակները մահչ են թէ
աղջիկ : Բողոքական աշխարհն աւելի հրեշ-
տակներուն աղջիկ ըլլալուն կուսակից էր եւ
կաթոլիկները՝ մահչ ըլլալուն : Այլ սակայն
այս խնդիրն անլոյծ մնացած էր՝ հակառակ
աստուածաբաններու բոլոր ճիգերուն, այլ
ընդ այլոյ փաստերուն : Ահա՛ այս խնդիրն էր
որ ծագեցաւ վերստին մեր այս երկու
մայրավանքերուն մէջ : Երուսաղէմէ Սուրբ
Յարութեան պատկեր մը զրկուած էր Ար-
մաշ, ուր հրեշտակները մահչ նկարուած
էին : Արմաշեցիք նոյն պատկերը ետ
զրկած էին առարկելով թէ հրեշտակները
աղջիկ են եւ ոչ մահչ :

Եփրեմ վարդապետ երբ վանահայր եղաւ
Արմաշու, եւ տեսաւ Մինասիկը, փառք տա-
լով Սատուծոյ զրկեց զանի Երուսաղէմ, գը-
րելով թէ հրեշտակներուն մահչ կամ աղջիկ
ըլլալուն համար վիճաբանութեան պէտք
չկայ, այլ անոնք մահչ-աղջիկ ստեղծուած
են Մինասիկին պէս... Ահա՛ այսպէս Մինա-
սիկով խաղաղեցաւ կրօնային հին անլոյծ վե-
ճերէն մին :

Ու եղաւ որ Արմաշու արդի Դպրեվանքը
բացուի, և Մինասիկ ցնծացաւ եւ ուրախա-
ցաւ, վասն զի իր լուսարարական ճարպի-
կութիւնները ցոյց տալու առիթը պիտի ու-
նենար աշխարհի չորս կողմերէն հաւաքուած
այս տիրացուներուն : Ամէն օր նոր մէկ տե-
սակ չապիկ կը հագնէր, եւ խաչը գոր
նորէն Պատրիարքէն ընդունած էր ի վարձ իր
բազմամեայ ծառայութիւններուն, կուրծքէն
կը կախէր : Ամէն ատեն որ ժամուն մէջ խաչ
բարձր կը լսուէր, իր խաչին կը նայէր, և ամէն
ատեն երբ խաչին երկրպագել խօսքը կը
հնչուէր, խաչը ցոյց կուտար ժառանգաւոր
գլխիներուն, որոնք կը խոնարհէին, եւ Մի-

նասիկին խաչին նայելով՝ կը խաչակնքէին .
այլ ծաղրանք մը էր այս ոչ թէ հանդէպ
Մինասիկի խաչին, այլ անոր միամտութեանը :

Կ'ուզէ՞ք գիտնալ թէ երբեմն ինչու Մի-
նասիկ կը գիրնայ և կը նիհարնայ : Տօնա-
կան օրերու մէջ գօտի մը կը կապէ, որուն
մէջ 366 հատ ոսկիներ կան, ըստ թուոյ
տարուան մէն մի օրերուն : Այդ գօտին կը
կապէ մէջքը ըսելով. «Շուրջ պատեսցէ
կամար հաւատոյ զմէջս սրտի իմոյ» և այլն :
Եւ յետոյ կը զրուցէ ինքնին. «Այսպէս գի-
րացաւ, պարարտացաւ Իսրայէլ, լիացաւ
լցաւ Տեառն բարութեամբք» : Եւ երբ գօտին
հանէ և նիհար կ'երեւի, կ'ըսկսի մրմռալ .
«Այսպէս մերկացաւ Իսրայէլ զփառս Տեառն,
լքաւ լուծաւ անկաւ, զեղաւ զեռաւ իբր
զեռուն սողուն զազիր» : Գործնական մարդ,
որ տարեկան տօն օրերը կը պատուէր ոսկի-
ներու չարոցով եւ զինքն ի ցոյց կը հանէր
պարարտ եւ գիրուկ :

Բոլոր տարուան մէջ լուռ մնալով, իր
փառքը վերապահած է մէկ օրուան մը, այն
է Սաչի վերացման երեկոյն, երբ վերջին
Սաչահանգիւտը կը կատարուի, «Զօրութիւն
սուրբ Սաչի քո Բրիտտոս» չարականը այն-
քան ուժգին ձայնով մը կ'երգէ որ վանքն
ամբողջ շրջակայ լեռներովը հանդերձ կը
թնդայ : Եւ վանքին մէջ ու շուրջը եղող
ուխտաւորք ի լուր այս ձայնին կ'ահա-
բեկին, եւ կովերն ու եղներ եւ բոլոր ա-
նասուններն իրենց ականջները անկելով կը
սարսուին եւ աղեկատու ձայներ կը հանեն,
կարծելով թէ Դաբրիէլեան փողն է որ կը
հնչէ :

Ո՛վ է այս Աղջիկ-Մինասը. — չկայ վանա-
կան մը որ հանրածանօթ ըլլայ Ստամպոլի եւ
ժօտակայ գաւառներու բնիկներուն որքան սա,
չկայ մէկը որ Արմաշը տեսած կամ Արմաշու
քովէն անցած եւ կամ Արմաշու անունը լը-
սած եւ Չարխափանի անունով ուխտ ունե-
ցած ըլլայ, եւ կամ Չարխափանը երազին
մէջ տեսած ըլլայ, եւ տեսած չըլլայ Մինա-
սիկը եւ կամ անոր անունը լսած չըլլայ :

Բայց Աստուած որ այս Մինասիկը զրկած
էր աշխարհի համը աւելու շնորհքէն, ա-

Լեւի մեծագոյն շնորհօք մը օժտեց զանի,
այնպէս որ ամբողջ Աստուածաշունչ սուրբ
գիրքն այսօր Մինասիկ գրեթէ ծայրէ ծայր
գոց գիտնալու շնորհն ունի:

Եւ քան զայս մեծ մխիթարութիւն ո՞վ
ունի այժմ այս աշխարհիս մէջ (*):

Ի՞նչ է իր փափաքը.— Արսէն վարդապետի հետ մէկ օրուան մէջ մեռնիլ, բայց
պայմանաւ որ եթէ ան արքայութիւն երթայ,
ինք... դժոխք երթայ:

ՎԱՀԱՆ ՎՐԴ. ՏԵՐ—ՄԻՆԱՍԵԱՆ

(Խ.) — Միայն երուսաղեմի արդի լուսաբարապետ Թադէոս վարդապետ եկաւեան
որ ամբողջ Նարեկը գոց գիտէ:

ԱՐՏԻՍ ԵՐԳԵՐԸ

ՔԵՋ ԱՂՈՒՈՐ...

Թռչնիկ մըն ես գարնայնի
երկնից ճամբէն մո՛լորուն,
Որ հողմնավար թափառի՝

Հոգիներո՛ւն պէս ամբոյն...

Ծաղիկ մըն ես աշնայնի,
Զգայնիկ մը մետաքսէ,
Որ մենաւոր կը թօշնի՝

Հոգիներո՛ւն պէս նըժդեհ...

Ըլլա՛ս թռչնիկ վերաւոր,
Ըլլա՛ս ծաղիկ հիւանդոտ,
Պիտի սիրեմ քե՛զ, աղւճր,

Հոգիներո՛ւն պէս տենդոտ...

Կ Ե Ա Ն Ք Ը

Դերեզմանին մէջ տրտու՛մ
Զմրան սիւզը կը փըչէ:
Շիրիմի մը տակ ճերմակ
Սիրելի մը կը ննջէ:

Շիրմին մօտիկ կը կանգնի
Շոճին հովէն երերուն,
Բարձր հասակը երկնասլաք՝
Ստուեր կուտայ քարերուն:

Հովը՝ հառա՛ջ սգաւոր՝
Շոճիին մէջ սևաստուեր,
Տառապագին սրտերու՝
Երգը կուլայ կարեւրեր:

Հող — վերմակին տակ ցրտին՝
Հեգ մեռելն ալ մենաւոր,
Խոկայ թէ կեանքը մարդուն
Անդամ չ'է անդ մ'է աղուոր...

ՆՐԱՆՏ Տ. ՆԱԶԱՐԵԱՆ

ԽՐԱՆՐԱԿԱՆ ՆՈՐԵՐ

Բերկրութեամբ կ'արձանագրենք կայսե-
րական այն բարձր գնահատումը որուն ար-
ժանացաւ Թովմաս Էֆ. Թէրզեան, ուսու-
ցիչ Սուլթանիէ վարժարանին, պատուելով
իւլայի Բ. աստիճանով: Մեր ջերմագին
խնդակցութիւնները կ'ողղկենք, այս հաճելի
առթիւ, բազմարդիւն ուսուցչին եւ տաղան-
դաւոր գրագէտ-բանաստեղծին:

Մեր անկեղծ շնորհակալութիւնները կը
յայտնենք Արեւելք. Բիւզսֆօլիոն, Մանգու-
մէ և Սուրհասիկ օրաթերթերու Տնօրէ-
նութեանց եւ Խմբագրութեանց՝ այն հա-
մակրական սողերուն համար որով ողջու-
նած էին Մասիօսի վերերեւումը:

Իզմիրի գրագէտ Առաջնորդը, հոգեշունչ
քերթուածով մը կ'օժտէ Մասիօսի ներկայ
թիւը, աշխատակցութեան խոստումով զոր
յօժարած է ընել՝ Խմբագրութեանս հրաւե-
րին ի պատասխան: Ոչ նուազ հաճոյքով կը
ծանուցանենք թէ ԱՂԵՖՍԱՆԴՐ ՓԱՆՈՍ-
ԵԱՆԷ եւս ստացած ենք զգայուն բանաս-
տեղծութիւն մը՝ յաջորդ թիւին համար:

“ՄԵՆԱՍԷՐ”, ԻՆ ՕՐԱԳ ԻՐԸ

ԲՆՐԱ, 28 Փետրվար. — Երէկ բրիւի առաջին հարուածը զարնուեցաւ Քօնքօրտիային որ պիտի քանդուի . . . եկեղեցիի վերածուելու համար — : Հակադրութիւնը այնքան ուշագրաւ է որ կ'արժէ կանգ առնել պահ մը անոր առջեւ : Տարիներով ու մոլութիւններով բռնաւորութեամբ ցոփակեացի մը զըղչման գալուստն ու կրօնաւոր դառնալուն կը նմանի տեղի ունենալիք հիմնական փոփոխութիւնը, միեւնոյն գեանին վրայ : Տարին հազիւ քոլորած, Բերայի չիտակ ճամբուն անցորդները պիտի դիտեն, առտու իրիկուն, որ քարուկիր մուսլ շէնք մը կառուցուած է, իր ճակտին խաչովը ու իր զանգակատունովը, նոյն այն անցքին վրայ ուր ատեն մը երգչուհիներու նկարներ եւ գրաւիչ ծանուցումներ կը փայլէին եւ որոնցմէ արդէն իսկ յիշատակ մը միայն կը մնայ :

Երգեցիկ սրճարանի մը անուանը տալէ խրտչելու չափ մաքրակրօն չեմ ու այնպէս ձեւացողներուն անկեղծութեանը վրայ կը կասկածիմ պարզապէս . բայց թէ ինչ առնչութիւն կրնայ գտնուիլ Մասիսի պէս թերթի մը հաղորդուելիք Օրագրութեան մը ու Քօնքօրտիային փլցուելուն միջեւ, — իբրեւ այժմէութիւն, — անա՛ ինչ որ զիս կը չուարեցնէ բացատրելու հարկը : Իմ մասիս, տասը տարիէն աւելի կայ որ ոտք կոխած չեմ հոն, բայց անկէ առաջ՝ երիտասարդութեան խրտչեակներս կը տանէին կը նետէին երբեմն զիս ալ այդ մթնոլորտէն ներս ուր, ձմրան ցրտաշունչ գիշերներ, կաղերուն առատ լոյսը, բաղմութենէն արտաշնչուած շոգին, զգլխիչ նուազածութիւնը, երգչուհիներուն շղարչներն ու չպարները, ամէն բան կը ներդաշնակաւորուէին արհեստական արըշտութիւն մը ու բռնադրօսիկ ձգողականութիւն մը ստեղծելու : Պատանիները կը դիմէին հոն անձանթին հրապոյրովը ու տարեցները՝ մեքենական քայլերով, լաւագոյն ժամանց մը չունենալուն : Այս գացողներուն մէջ կը նըշմարտէին, թէ եւ պատահաբար, մեր օրուան

գրողներէն, գրագէտներէն ոմանք ալ որոնք՝ կեանքի դրուագներ ուսումնասիրելու, ընկերային նիւթեր գտնելու համար, ինքզինքնուն ներելի կը համարէին ամէն սեմէ ներս ոտք կոխել : Եւ կը յիշեմ հանդիպած ըլլալ, մէկէ աւելի անգամներ, կանանչ սեղանին շուրջը, — որ այդ հեռաւոր թուակահին կը տարածուէր Քօնքօրտիայի վերնաշարկը, ներքին սրահի մը մէջ, — օրագրողներ, վիպագիրներ, իրենց հասակին թարմութեանը ու զգացմանց խանդավառութեանը մէջ, ուղեթիւն մոլութենէն բռնաւորութեամբ առժամապէս ուրիշներ, գրականութենէ բոլորովին մեկուսի, հարուստի զաւակ եւ զքօսասէր երիտասարդներ, հոն կը վատնէին իրենց դրամը, հանգիստը ու արժանապատուութիւնը, գրեթէ ամէն գիշեր : Չեմ գիտեր թէ, խաղամոլութեան դէմ դրուած բացարձակ արգելքէն ու Քօնքօրտիան իր երգեցիկ-սրճարանի սովորական վիճակին վերածուելէն ետքը, հոն յաճախողներ գտնուեցան տակաւին, յիշած դասակարգէս : Բայց, իբր քսան տարի առաջուան պատկերը եկաւ յանկարծ կենդանացաւ աչքիս առջեւ, երբ այս իրիկուն, մտաղբաղ այնտեղէն անցնելուս, նշմարեցի յանկարծ կահկարասիներուն դուռն հանուիլը, արագ ու խառնիճաղանձ կերպով, յուսահատական շարժումներով : Պատկեր մը տենդագին կեանքի, ինքնամոռացութեան ու մոլորանքի, որ մեր երիտասարդներէն ալ չատերը անկումի աւաղնորդած է, նիւթական կտամ բարոյական :

Այդ թուականներուն, Արեւելի կիրակնօրեայ յաւելուածներէն մէկուն մէջ վիպակ մը հրատարակուեցաւ որուն նիւթը կը դառնար ուղեթի սեղանին շուրջը . հարադատ ուսումնասիրութիւն մը եւ իրական պատկեր մըն էր որ պատմութեամբ ձեւին տակ՝ բարոյական մը կը պարունակէր իր մէջ, խաղամոլութենէ զգուշացնող տողեր, երիտասարդ գրողի մը դառնացած գրիչէն ելած : Վիպակին հեղինակը, քանի մը օր ետք, սահմաստով քառթ մը կը ստանար հին խաղամոլէ մը որ գրաւելի անձ մըն էր միանգամ :

մայն, — «Այդ պատմութիւնը գրելու համար քանի՞ ոսկի վաճառեցիք»։ Հարցումը սրամիտ էր, փորձառուի մը կողմէ ուղղուած, եւ պատասխանի պէտք չէր թողուր։ Գոնէ, եւրիտասարդ գրողին համար, իր վիպակը կը մնար յիշատակ մը անքուն անցուած գիշերներ, թուներգային յուզումներու, մինչ ուրիշներ, իրեն հետ միեւնոյն սեղանին շուրջը բոլոր ուղղներ ու մեծապէս միաստուղներ, այդ սփոփանքն ալ չունեցան։ Ազատ կերպով յիշողութեանս կը ներկայանան դեռ ուրուագիծներ՝ այդ զրօսական կեանքէն. բանաստեղծներ, անկաշկանդ տեսակէն ու վայրկենական տպաւորութեան տակ գրող, որոնք զգայուն ոտանաւորներ կը գրէին՝ Սպանուհիի մը պարէն զգլխած կամ Իտալուհիի մը երգուածքէն խելայեղ. յետոյ, ժամանակ անցնելով, օթեակի մը խորը տենդոտ մատներով գրուած այդ երգերը կը հրատարակուէին, առանց բնաւ յիշուելու անոնց ծագումը եւ որի՞ ուղղուած ըլլալը, ու միամիտ ախորժանքով մը կը կարդային է՛ն պարկեշտ ընթերցողներն իսկ։

Կրնայի դեռ առաջ տանիլ շտրքը. բայց ի՞նչ հարկ. այսքան հակիրճ նօթագրութիւն մըն ալ եթէ ընել փորձուեցայ, — որ գուցէ գրչի յանդգնութիւն մը համարուի՝ իբրեւ ամբարշտական նիւթ — ըսելու համար էր թէ, Քօնքօրտիան որ կը փլցուի, իր երկարատեւ գոյութեան մէջ ունեցած է թեթեւ, անցողակի շրջան մըն ալ որ քանի մը արձակ էջեր եւ հոյլ մը ոտանաւորներ ներշնչած է մեր գրողներէն ոմանց որոնք իրենց ճերմկնալու մօտ եղող պեխերուն տակէն սկեպտիկ ժպիտ մը եւ տխուր վերջիչում մը ունենան գուցէ հիմակ, մտաբերելով իրենց եւրիտասարդութեան չէնշող օրերը։

2 Մաս. — Կերեւայ թէ Իզմիրի հայկաբանները դեռ միտք յոգնեցնելու վրայ են՝ «աճպարար» բառին բուն իմաստը որոշելու համար, վասն զի մինչեւ այսօր թերթերուն մէջ չկարդացինք անոնց եզրակացութեան մը յանգած ըլլալը։ Խնդիրը կը յիշէք անշուշտ։ Իզմիրաբնակ բժիշկ մը, Տօքթ. Թէր-

զեան, դատ բացած էր «Արեւ. Մամուլ»ի Տնօրէնին դէմ՝ իր հանրային պաշտօնավարութեան նկատմամբ գործածած ըլլալուն համար այդ բառը՝ նոյն իմաստով որով կը գործածուի, օրինակի համար, երբ... Քաղնէօլին ռէքլամ մը գրել ուղղուի լրագրաց մէջ։ Բնականաբար, Պ. Հրանտ Մամուրեան հակառակը կը պնդէ, լաւագոյն իմաստ մը վերագրելով «աճպարար»ին եւ դատարանը, իմաստուն ու անկողմնակալ որոշումով մը, ձեռնհաս անձերէ՝ լեզուագէտներէ, մասնախումբ մը կը կազմէ, իրեն տեղեկագրուելու համար ճիշդ իմաստը, ստուգաբանութիւնը։

Այս լրագրական դատը, որ միակ բառի մը շուրջը դառնալուն համար կարծես աւելի՛ հետաքրքրութիւն կը չարժէ ինչպէս Իզմիր նոյնպէս եւ հոս, իր նախընթացը ունեցած է երկար տարիներ, գրեթէ քառորդ դար առաջ, Պոլսոյ մէջ. սա տարբերութեամբ որ երկու ընդդիմադիր կողմերն ալ լրագրագետ էին, — Մառքսի բարեփոխող հիմնագիրը և Փոլեզի արտօնատէրը։ Վէճի աւարկան «Կենդանի» բառն էր, զոր մէկ կողմը կուգէր մեկնել «անասուն»ի իմաստով, իսկ միւս կողմը՝ «ողջ»ի իմաստով։ Դէպքը պատահած ըլլալով մեր տղայութեան օրերուն, աղօտ կերպով միայն կը յիշեմ՝ առանց մանրամասնութեանց։ Այդ թուականին, բառաքննիչ մասնախումբ կազմուելու պէտք չէր տեսած դատարանը, վասնզի ծախօթ հայկաբաններ էին արդէն Կ. Ս. Իւթիւճեան և Համբարձում Ալաճաճեան որոնք ստուգաբանութիւնը բառգիրքներով ներկայացան ատեանին ու իրենց լեզուաբանական փաստերը անձամբ պարզեցին։ Եւ եթէ չեմ սխալիր, դատարանը հաշտարար վճիռով մը փակեց խնդիրը, զոհունակութիւն պատճառելով երկու կողմերուն միանգամայն։ Արդեօք «աճպարար»ն ալ «Կենդանի»ին բաղդը պիտի ունենայ. Իզմիրի թղթաբերին սպասենք՝ իմանալու համար

ԹԵԼԱԿԵՑ ԲԵՐԱՅԻ

ՖՐԱՆՍԱՅԵՆ ԴԵՊԻ ՊՐԱԶԻԼԻՍ

(ՏԻՔՔ. ԼԵՈՐԱԼ ԳԱԲԼԱՆԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԸ)

I.

Եթէ աշխարհի վրայ կար մէկը որ նախա-
սահմանուած չէր արկածախնդրական կեանքի
մը մէջ նետուելու, այն ալ ես էի: Եւ սա-
կայն, պատմելիք պարագաներուս բերմամբ,
հերոսը և զոհը եղայ ոչ-գոհիկ դրուագի
մը որ երկար օրեր մղեց զիս՝ ծովուն ու
երկնքին մէջտեղ՝ հետեւելու երկտասարդի
մը որուն տխուր հռչակը վառնել տուաւ
ինծի՝ ժամանակս, դրամս, և ցրեց պատ-
րանքներս՝ զբօսական պտոյտներու սիրահար
պառօններու վաւերականութեանը մասին:

Բնաւորութեամբ նստուկ կեանքի սիրա-
հար, երջանիկ համարելով ինքզինքս՝ Ծրան-
սայի մէջ կատարելագործելուս համար բժշ-
կական ուսումնասիրութիւններս, յարգելով
իմ վարպետներս ու սիրելով Բարիզը, դեռ
զարմանքս չեմ կրնար զսպել թէ՛ մտքի ինչ
մոլորանքով յօժարեցայ, 1905 յուլիս 29ին,
կալէի զբօսանաւը նստիլ որ թիարան մըն
է եղեր: Սա ստոյգ է միայն թէ, ձախորդ
որոշմտես հետեւեցայ ու նաւարկեցի Պառօն
աը Կռավալի և վայելչագեղ Պառօնուհիին
հետ զէպի հեռաւոր ծովեզրեր ուրկէ պահ
մը կարծեցի թէ ա՛լ չպիտի կրնամ ետ դառ-
նալ: Հովրէն մինչև Պահիա, այս ուղեւո-
րութեան միջոցին որ չա՛տ կը նմանէր փա-
խուտի մը, ամէն օր և գրեթէ ամէն վայր-
կեան առիթ ունեցայ դիտելու, ուսումնա-
սիրելու և նոյն իսկ դիմակազերծ ընելու
«աղնուական անձնաւորութիւնը» որ զիս իր
հետ կը տանէր: Թէպէտ բնա՛ւ չէր սիրեր
խօսակցիլ, բայց՝ մէկէ աւելի անգամներ՝
Ովկէանոսին տառնձութեանը մէջ՝ փափազ
զգաց գաղափարներու փոխանակութիւն
կատարել մէկուն հետ որ իրեն հետ մաաւո-
րական... քիչ մնաց պիտի ըսէի ընկերական

միևնոյն մակարդակը ունէր: Այս պատճառաւ,
ժամեր կային ուր իր յաւիտենական սիկառէն
ձանձրացած, ու թերեւ Տիկին Մէռէլի
ժպիտներէն ու շնորհալի սիրաբանութիւն-
ներէն յոգնած, ժան տը Կռավալ «պատիւ
կընէր ինձ» հետս խօսակցելու և զիս իր
մտածմանց հաղորդակից ընելու, — չա՛տ փոք-
րիկ սահմանի մը մէջ:

Կը խորհիմ ուրեմն որ այն վայրկեանին
ուր Պ. աը Կռավալ, Սէնի եղեռնադատ
ատենանին առջև իր ունեցած դատավարու-
թեամբ ու կրած դատապարտութեամբը(*),
հանրային կարծիքը անգամ մըն ալ իրմով
կզբաղեցնէ, կրնամ հրապարակել սիրակցորդ
ամոլին արկածները այն վայրկեանէն ուր իր
անձնական բժիշկը եղայ, մինչև Եւրոպայի
հողին վրայ վերստին ոտք կոխած վայր-
կեանս, իմ աղուոր երազներուս փարատելէն
այլալաւ:

Հիմակ որ վերստացած եմ իմ մտաւորաւ
կան նախկին վիճակս և բանիմացութիւնս
ու յիշատակներ կը պաշարեն ուղեղս, կ'ար-
ձանագրեմ զանոնք այստեղ, կանոնաւորա-
պէս, անկաշկանդ և աներկիւղ, միմիայն
իրողութիւնները պատմելով ճշգրտապէս:

Արագօրէն անցնելով նախնական ու ան-
կարեւոր պարագաներուն վրայ, ըսեմ պար-
զապէս թէ յուլիսի վերջին օրերու իրիկուն
մը, սա հեռագիրը կը ստանայի իմ վարպե-
տէս՝ Տօքթ. X... Է, որ հիւանդանոցներու
բժիշկ է:—

Ծ. Խ. — Մեր օրաթերթերն ալ հրատա-
րակած ըլլալով սոյն դատին մանրամասնու-
թիւնները, աւելորդ կը դատենք կրկնել հոս:

«Սիրելի բարեկամս,

«Կը յօժարիս զբօսանալով մը ճամբորդ-
դէլ, երկու կամ երեք ամիս, Պառն տը
«Կուսվալի հետ: Այդ պարագային, հարկ է որ
«պատրաստ ըլլաս երկուշաբթի իրիկուն Հալ-
«րէն մեկնելու: Պատուագինի խօսք չիկայ.
«Բայց ամսական գրեթէ 1000 ֆրանք:

«Պատասխանդ ուղղէ՛ առ Պ. Թ... , իր
«բնակարանը, այս իրիկուն դէպի ժամը եօթ:
«Թէլէֆօն թիւ... , հասցէ... — Բոյդ X»:

Եթէ կայծակ իջած ըլլար տանս վրայ,
այնքան չպիտի սարսեցնէր զիս որքան այս
առաջարկը: Ճամբորդեմ: Որքան ժամանակի
համար. հապա հիւանդներս. հիւանդանոցի
մէջ ունեցած պաշտօնս: Կառք մը նետուե-
ցայ և գացի տունը Պ. Թ... ի որ տակաւին
իր գրասենեակը կը գտնուէր, Օրէնայի ար-
ուարձանը. յետոյ, հեռաձայնին գլուխը անց-
նելով, խօսակցեցայ Պ. Թ... ի հետ որուն
գրասենեակը կը գտնուէր, ճիշդ այդ վայր-
կեանին, Պառնը և կուգէր անյապաղ ճանչ-
նալ զիս, Պ. Թ... ի հրաւերով:

Ինքզինքս ժողվեցի՝ յուզուած չերեւնալու
համար և ուղղուեցայ դէպի Մէյէրպէր փո-
ղոց ուր, որոշեալ հասցէն գտնելով, ինքզինքիս
կատարելապէս տէր, ներս մտայ զբօսանալու
վարձող գործակալութեան մը գրասենեակէն:
Անշուշտ հրահանգներ տրուած էին զիս ըն-
դունելու համար, վասն զի իսկոյն առաջ-
նորդուեցայ կարմիր ու սկզբօք կահաւո-
րումով ընդարձակ ու չքեղ սենեակ մը որուն
ձեղունը քիչ մը ցած էր, շոգենաւի խցիկնե-
րու պէս: Հոս հոն, պղտիկ սեղաններու,
դարակներու վրայ, նաւերու նմոյշներ կե-
րենային, եղէգի պէս նուրբ, խաղալիկնե-
րու պէս յղկուած, իրենց ամենայնեւին կաղ-
մածներով ու գոյնզգոյն պատեանով:

* *

Դէմս, երկու մարդիկ, կը ժպտէին ինծի:
Մէկը փոքրահասակ, խնդումերէս և համար-
ձակ երեւոյթով. միւսը...

Միւսը բարեձև հասակ մը ունէր, խար-
տեալ մազեր, ու գերազանցապէս վայելուչ:
Ետքէն միայն մանրակրկիտ ուշադրութեան
առի զինքը, բայց այդ իրիկունը անմիջա-

պէս աչքիս զարկին իր կատարեալ ազնուա-
կանի շարժումները: Նստած պահուն, թե-
ղանեակները այնպէս փափկօրէն քաշեց որ
նպաստաւոր զաղափար մը կազմեցի իր
մասին:

Պառն տը Կուսվալն էր:

Երկրորդ տպաւորութիւնը զոր կրեցի,
սա եղաւ թէ կ'աճապարէր լինցնելու այն
սակարկութիւնը որուն համար դէմ դէմի կը
գտնուէինք: Զիս հարցափորձեց արագ, նոյն
իսկ չոր խօսուածքով մը, ուր զգայի թէ
կ'ուզէր շեշտել այն ընկերային տարբերու-
թիւնը որով ինքը ինձմէ գերադաս կը հան-
դիսանար անունով և հարստութեամբ:

— Անգլիէրէն կը խօսի՞ք: Նաւուն ամբողջ
պաշտօնէութիւնը անգլիացի է:

Պատասխանեցի թէ անգլիէրէն չգիտնալս
արգելք մը չէր:

— Լա՛ւ, ըսաւ Պառնը, ուրիշ ի՞նչ լե-
զու կը հասկնաք տեսնե՞ք:

— Ռուսերէն, չուէտերէն ու գերմաներէն
կը խօսիմ, որ կերպով մը իմ մայրենի լե-
զուս է:

— Ռուտեղացի էք:

— Լիպաւէն, Բուրլանտի մէջ:

Այդ վայրկեանէն, այլևս գերմաներէն
միայն խօսակցեցանք: Պառնը բաւական
վայելչօրէն կը խօսէր այդ լեզուն:

Տեղեկութիւններ տուի իրեն իմ անձիս
վրայ, ամասկանիս մասին համաձայնեցանք
և յանձնարարեց ինծի՝ նաւու մը դեղարանին
յատուկ բոլոր առարկաները պատրաստել,
խնդրեցի իրմէ օր մը յետաձգել իր մեկնումը,
վասնզի անհնար էր ինծի իր փափագած
կերպով պատրաստ գտնուելու:

Խօսակցութիւնը վերջացնելու համար,
Պառնը ըսաւ.

— Լաղը ես ձեր բնակարանը կուգամ,
ժամը տասնըմէկէն դէպի կէսօր:

Եւ արդարև, յաջորդ օրը, կիրակի, ո-
րոշուած ժամուն, Պ. տը Կուսվալ կ'այցելէր
ինձ: Նախորդ օրուան հակիրճ խօսակցու-
թիւնը շարունակեցինք մանրամասնօրէն:
Եւ, անգամ մըն ալ նշմարեցի ջղադրգի-
ւան համբերութիւնը այս մարդուն որ տեղը

հանդարտ չէր կրնար կենալ, պատուհանէն դուրս կը դիտէր, իր առողջութեանը մասին հարցումներ կուղղէր ինձ՝ աչքերը անդին սեւեռելով, և առանց պատճառի կը ծիծաղէր:

Ասով հանդերձ, բոլորովին ուղիղ վարմունք մը ունեցաւ և խօստացաւ գրաւոր յանձնառագիր մը գոր ստացայ յաջորդ թղթաբերով:

«Պ. Տօթթէօն, — կը գրէր ինձ Պառոնը, — մեր վերջին տեսակցութիւններէն կը հետեւի որ դուք յանձն կ'առնէք, երկու «ամսուան համար, ձեր բժշկական բոլոր «խնամքը նուրբել՝ ամսական 1000 ֆր.ի «փոխարէն՝ Քարաբինա զբօսանաւին ուղեւ- «որներուն: Վստահ եմ որ ճշգրտապէս կերպով «կը գտնուիք վաղը, երեքշաբթի, ժամը «վեցին, Յրաքաթի Օթէլը, Հավր:

Ձերդ
ժ. ՏԵ ԿՌԱՎԱԼ»

Այցելուիս կողմէ ինձ տրուած առատ դրամին շնորհիւ, փութացի դեղագործական ամբողջ կաշմած մը պատրաստել ու ինծի համար ալ՝ հասարակածային կլիմայի յատուկ զգեստներ գնել: Երկու օր չարաչար յոգնեցայ, հրաժեշտի արագ ողջոյններ փոխանակեցի բարեկամներուս հետ:

Վերջապէս հանգիստս գտայ, երբ բոլոր զոյքերս ճամբայ հանելէ ետք, երկաթուղւոյ կառախումբի մը առաջին կարգի մէկ վակօնին անկիւնը գտայ ինքզինքս, դիմելով դէպի իմ նոր ու խորհրդաւոր ճակատագիրս: Վակօնին մէջ ինձ ուղեկից ունէի ծերունի բժիշկ մը որ առաջին անգամ կը ճամբորդէր երկաթուղիով և մինչև Ռուան երթալու գաղափարը կ'ահափեկէր զինքը: Երբ իրեն յայտնեցի թէ գուցէ աշխարհի շրջանը պիտի կատարեմ, ծովի ճամբով, հարուստ պառոնի մը հետ, կասկածանքով երեսո նայեցաւ ու այնուհետեւ ալ բառ մը չարտասանեց:

Ինձմէ բաժնուած վայրկեանին, Պառոնը ըսած էր ինծի.

— Երբ Հավր հասնիք, Մառի Օլնիէ հարցուցէք օթէլի սպասաւորին որ կայա-
րանը պիտի գտնուի:

Մոռցած ըլլալով այս պատուէրը, առաջին գործս եղաւ հարցնել սպասաւորին...

Պ. տը Կռավալը:

— Ձեռք ճանչնար:

— Ինչպէ՛ս, չէ՞ք ճանչնար:

Վարանոտ քայլերով պանդոկ կը վազեմ և հարցումս կը կրկնեմ, Պառոն տը Կռավալ անունով մարդ չե՛ն ճանչնար: Տէ՛ր Աստուած, արդեօք փառաւոր ճամբորդութենէս ետ պիտի մնամ, — կը մտածեմ ինքնին — պանդոկի պատկառելի արկղակալուհիին հեգնոտ նայուածքին տակ: Ո՛չ, բն յղէ՛ր կ'առաջնորդէ զիս, ճաշարան կը վազեմ և հոն կը գտնեմ Պառոնը, շնորհագեղ ու մանկամարդ տիկնոջ մը հետ նստած: Փոքրիկ սեղանի մը առջև:

Տիկին պառոնուհին, որուն դեղեցկութիւնը կ'ուրուագծուէր ծովուն կողմէն, ուր նստած էր, բարեւեց զիս. և համակերպելու համար իր գոռոզ ամուսնին փափագին, որ Բարիդէն իսկ ըսած էր ինձ թէ սովորութիւն ունի կնոջը հետ տառնձին ճաշելու, հեռացայ, քովի մէկ սրահին մէջ ճաշելու համար:

ժամադրութիւննիս որոշուած էր ժամը ութին համար, Քարաբինա զբօսանաւին մէջ որ Հավրի աւազանը կը գտնուէր: Մեկուկուկացայ օթէլէն, չի պատասխանելով ինքնաշարժի մը կառապանին որ կը հարցնէր ինծի թէ արդեօք կը ճանչնայի մէկը որ հեռաւոր ճամբորդութիւն մը պիտի կատարէր. — ետքէն իմացայ թէ այն կառապանն էր որ Բարիդէն Հավր փոխադրած էր պառոնը վայրաշարժով, և որուն կըսպասէր իր հաշուին կարգադրութեանը համար:

Կայարանէն՝ դեղագործական նիւթերու խոյոր ծրարներս փոխադրել տուի չոգենաւը որ Մեծ — Թատրոնի քարափին առջև խարխալ նետած, եռակայմ չքեղ զբօսանաւ մըն էր:

Պառոնը արդէն իսկ հոն կը գտնուէր. դէպի ինծի առաջացաւ ու իսկոյն ինծի ներկայացուց նաւապետը՝ Նիւթըն Քօուս, պարզ, գիրուկ մարդ մը: Շուտով ճանչցայ

Թէ որն էր իմ խցիկս, աշխատանոցս, և չընկնայ ամբողջ նաւը որ ութը սենեակ, երկու սրահ, ճաշարան ու ծխարան ունէր:

Կամրջակին վրայ վերջին պատրաստութիւնները կը տեսնուէին: Դիշերը վրայ հասած էր: Մեր շուրջը գտնուող նաւերը իրենց ճրագները կը վառէին: Փարոսին լիառատ լոյսը ցայտեց յանկարծ: Զանգակի մեղամաղձիկ ղողանջիւն մը լսուեցաւ...: Եզերքէն կը հեռանայինք՝ դէպի բաց ծովը նաւարկելու համար:

Անիւր առաջին շարժումը լսելուն, պառոնը փութացած էր նաւապետին քով, կամրջակին վրայ: Այդ փորձ նաւաղը հանդարտ նայուածք մը կը պտտցնէր մարդոց և իրերուն վրայ: Միւսը, աչքի սոսկալի սեւեռումով մը զոր ես միայն կը նշմարէի, կը դիտէր ցամաքը, քաղաքը, և Ֆրանսան որ կը հեռանար: Զսպուած շարժումներ կը մատնէին իր ներքին խռովքը: Դիւտէն ոտքը ճերմակներ հագած էր: Դիտեցի որ, երկու անգամ, աննշմարելի շարժումով մը հանեց իր նաւային գլխարկը, բարեւելու ձեւով: Յետոյ, վար դրաւ դիտակը և իբր Թէ իր բոլոր ծանր մտածումները ծովուն յանձնէր, սիկառէթ մը վառեց:

Փարոսը կը լուսաւորէր նաւահանգստին առջեւի մասը և Քաթարինային կամրջակը: Նաւահանգիստէն դուրս ելլելուն պէս, Պ. աը կռավալ՝ ականջ դնելով կնոջական ձայնի մը որ կ'երգէր, յամրաքայլ վար իջաւ, դէպի խցիկներուն կողմը:

II.

Այդ միւսնոյն իրիկունը, հաղիւ ցամաքէն բաժնուած, հակառակ բաց ծովին վրայ փչող անոյշ հովին որ բոլոր յոգնութիւններս ու տրամութիւններս փարատելու էր, անդիմադրելի կերպով համակուեցայ դառն մեղամաղձութեամբ մը, և իբր Թէ նախադասայի գլխու գալիք դժբաղդութիւնները, մինչև իսկ մաղթեցի մեքենայի անակնկալ խանգարում մը որ ծովեզերք նետէր զմեզ և առիթ գտնէի խոյս տալու իմ խորհրդաւոր Պառնիս ուղեկցութենէն: Անհունին մենաւորութեանը մէջ, յանկարծ տարտամ բնագ-

դում մը ունեցայ Թէ չա'տ Թեթեօրէն ու առանց որոշողութեան շարժած էի՝ շողենաւ նստելով այդ մարդուն հետ, և Թէ ասիկայ դեռ սկիզբն էր իմ կրելիք նեղութիւններուն:

Մտաւորական այս յոռի վիճակին մէջ էր որ խցիկս գացի և փորձեցի քնանալ:

(Շարունակելի)

ՁԱՌԿԸ ՇՈՎԷՆ ՊՈԽՐՍ

Կաղմով վատառողջ, ջիղերով տրկար Մեծ ու փոքրերուն յաւէտ օգտակար Բուժիչ, կաղաւթիչ Դեղ մը անուանի եթէ կայ՝ ձրկան զուտ իւղն է անի. Եւ հրաշագործ այդ ձուկն է Մօրիւն իր իւղն ըմպողը կը դառնայ կորիւն: Կուտայ արորժակ, ոյժ, քուն, և իսկոյն կարմրին այտեր խնձորի հանգոյն: — Բայց աւա՛ղ որ իւղն այդ Մօրիւ ձրկան Անխաղախը հոս ծախողներ քիչ կան... Լաւագոյն տեսակն անոր, քաղցրահամ, Շուէտի եզրերէն չիտակ, այս անգամ Բերել տըւած է Լեոն Կիւմիւշեան Որ՝ ընթացքին մէջ այս ներկայ ձմրան, իր դեղարանի յաճախորդք ամէն Ուղածնուն չափ գան, առնեն ու խըմեն Եւ ինչպէս ամրան հեղձուցիչ տաքուն «Միջատասպան»ով գըտան անուշ քուն, Ձմրան ցրտաշունչ խիստ օրերուն ալ Կարենան առողջ կենցաղ ունենալ, Եւ միշտ ստիպուին միայն դիմելու Առ Լ. Կիւմիւշեան ի Չարչըգաբու:

Կ. ՊՈԼԻՍ

Արուարձաններէ ու գաւառներէ գնել փափաքողներուն՝ ընդփոյթ կը շրկուի յանձնակատարներու միջոցաւ:

Հիմնադիր—Կ. Ս. Իթիէիճեան
Տէր եւ Տնօրէն—ՏՈՒԹ. ԵՂՈՒԱՐԴ ՄԱՍԻՍ

Տպագրութիւն ԱՐՄԻՆԻԱԿ Օրագրի



ՌՕՍԻԱ-ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԴԵՀ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԱՐԿԱՄՔ

1881 մարտ 20-ի Կայս. Ուկրաինայի արտոնում

Կեդրոնատեղին Բեռլինում, իրեն յատուկ չէ՞ք

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի, ՀՐԴԵՀ, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱՄՆԵՐՈՒ ԴԵՄ,

Ինչպէս նաեւ ՀԱՅԵՆԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ Կատարելուն դէմ:

Ընկերութեան դրամագումար, ամբողջապէս վճարուած

10,666,666 ֆրանք

Երաշխաւորութեան գումար աւելի քան

149,852,000 »

Ընկերութեան ապահովագրութեան վճարուած դրամագումար եւ վնասուց հատուցում

355,840,000 »

1903 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին եւ տոկոս

64,553,800 »

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան խան, Վոյվատա, Ղալաթիա,

2-10

ԱՌԻԹԵՆ ՕԳՈՒՏ ՔԱՂԵԼ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԵՐՃԱՅԻ



ԱՊԱՌԻԿ ԵՒ ԿԱՆԵՒԿ ՎԱՃԱՌՈՒՄ

Հերձայի վաճառատներ՝ գոյարեղեններու, սպիտակ արծաթ չափաներու, գրգռի պատի եւ քոնսրի ժամացույցներու մասնաւոր վաճառումէն զատ, իր սեփական յաճախորդներուն վաճառութիւնէն քաջալիքուած՝ առանց անհրաժեշտ լաւատարարութեան մէջ եղանակի լաւաւի վերջին նշաններու վրայ պատշաճ ունի առանց, հասնելու եւ ազաւոյ համար ամէն տեսակ հագուաներու ու առանցի համար մաշակող վերանորոգողներ, նաեւ ճերմակեղեններ, ֆաթեղեններ եւ քոնսրիներ ու ամբիկեղեն կոշիկներ: Ունի նաեւ կահաւորութիւն, ձեղանի լամպաներ, մանրակարգներ, երաժշտական արտադրութիւն, գեր, գեղերի մաշակողներ, կրօնականներ, ու պիտիք էթներ՝ ամենավերջին կատարելութիւններով:

Հերձայի վաճառատներ իրականապէս ու լաւօրէն շահած է հանրութեան վաճառութիւնը եւ գոյարեղեններ իր ապրանքներուն ազնուութեան եւ անկեղծութեան մաքրութեան, ձեւաւորութեան եւ ամենութեան համար:

Այս ամենուն արդեաւ արժէքին վաճառումն է

ԱՊԱՌԱՏՈՒՆ

Միայն թէ դեռ առաջին հարիւրին 20-ը կանխիկ, իսկ մնացեալ գումարին համար շարքաթուան հարիւրին 5 վճարմամբ պարտաւ է հալթաթել:

Վաճառատուն հաստատուած է


ՄԵՆՇՆԻՆԿԱՅ. ՈՍԿԵՐՉԱՅ ՄԵՆ ՓՈՂՈՑ ԹԻԻ 13

Անգամ մի անգամ բաւական է համազուելու համար թէ՛ Հերձայի անկեղծ կողմի մակերգութեամբ իր փհնակն է առաջ դնել, իր ամէնէն զգաւորական յաճախորդները կանխիկ գնողներու ցամաք հարիւրին 5 զեղչ:

Սակարկութիւն չկայ:

Երբ-եղան վճարմանը համար հաւաքիչներ միշտ պարտաւ են:

2-10





Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սեննեալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը ան վերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է։

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅԹԱՅԹԻԶ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Co.

Զեռքի, ուռքի ու ուռքի եւ ձեռքի միտնգամայն մեքենաներ կը գտնուին։

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ շիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ ամէն ոք Սինկէրի մեքենաները կը գնէ։

Սինկէրի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ՀԱՅԹԱՅԹԻԶ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

ԲԵՐԱ.

- 1. Մեծ փողոց, Պօն Մառէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին.
- 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿԱԼԱԹԱ.

- 1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը.
- 2. Գարաքէօյ, Թրամիլէյին կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

- 1. Սուլթան Համամ, Թ.
- 2. Սուլթան Պէյազիտ, Թրամիլէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԿԻՆՏԱՐ

Զարը Պօլու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կասաբեալ Երաւաւորութիւն։

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր ֆաղաֆներուն մէջ։

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւզօղլուի տունը։

2—10

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ, ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 12

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ զոռ, մառնադիտաբար եւ երկար տարիներէ ի վեր կը դարձանէ առամաքի, աղեաց, միզային ճանքաներու հիւանդութիւնները, ջղային եղանակները, հին եւ նոր գաղտկան ախտերը։ Այս վերջին ախտերը՝ առանց առամաքի խոնգարման եւ նորագոյն մեթոտներով կը բուժէ կարճ միջոցի մէջ։

Հիւանդ կընդունի ամէն օր կէս օրէ վիւլը, Զորեքլաբթի օրերը միայն ձրի։ 2—10

Դ Ե Ր Զ Ա Կ

Վ Ի Զ Ե Ն Ա Լ Ա Ճ Ա Ե Ա Ն

Ղալաբիա, Հարանճը փողոց, Թիւ 13

Լաւ տեսակ կեդրոններով ու ձեւաւոր հազուադէպ պարտաւել առ ռազմիկները, որոնք միտնգամայն սթանդարտն կը փնտռեն եւ վճարման դիւրին պայմաններ, կըրնան դիմել այս նոր բացուած խանութք, եւ մեծապէս գոհ պիտի մնան։

2—10